Արձանագրություն N 2

ԳՄՍՀ-ԳՀԾՁԲ-2025/19 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սևան *21.05.2025թ, ժ 11:00, ք. Սևան, Նաիրյան, 164*

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Ղուկասյանը
Անդամներ՝ Մ. Ավետիսյանը, Հ. Ղուկասյանը, Մ. Մկրտչյանը, Մար. Մկրտչյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

ԳՄՍՀ-ԳՀԾՁԲ-2025/19 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգով հայտերի բացման, դրանցում առկա փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման և ընտրված մասնակցի որոշման մասին

---

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնման ընթացակարգի մասին հայտարարությանը և հրավերը 14.05.2025թ. հրապարակվել է armeps.am էլեկտրոնային գնումների համակարգում և www.gnumner.am կայքում: Նիստը սկսվեց 21.05.2025թ. ժամը 11:00-ին, իսկ մեկ աշխատանքային օրով կասեցումից հետո շարունակվեց 22.05.2025թ. ժամը 11:00-ին:

1.2 Սևանի համայնքապետարանի կարիքների համար Սևան համայնքի ճանապարհների փոսային նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ԳՄՍՀ-ԳՀԾՁԲ-2025/19 ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն
1	«Տեխնո Շին» ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 3-րդ նրբ., 14 տուն, հեռ 093828121
2	«Նո Օնա»ՍՊԸ	ՀՀ Արմավիր համայնք, գ. Բամբակաշատ 4փ. 2փ., հեռ. 093-55-73-81,

2. Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

3. Տվյալներ հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- հայտերում ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն, գնի առաջարկ, տեեկանք մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին կից ներկայացնելով աշխատակիցների համաձայնագրերը և հավաստագրերը, ինչպես նաև նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր և պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերի լուսապատճենները: «Տեխնո Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտում ներառված չեն հրավերով սահմանված մասնագիտական փորձառությունը հավաստող պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր պայմանագրերի, համաձայնագրերի, պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթղթերի՝ ակտի,արձանագրության,հաշիվ ապրանքագրի պատճենները), հրավերով սահմանված աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատած գրավոր համաձայնությունը և «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.09.2023թ. թիվ 2106-Ն որոշմամբ սահմանված կարգով տրամադրված շարունակական

ներդիրը, իսկ լիցենզիան և մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթղթերևը ստորագրված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Բացված հայտերում հրավերով պահանջվող մյուս բոլոր փաստաթղթերը առկա են: Հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվեց մասնակիցները ծանուցվեց հայտում տեղ գտած անհամապատասխանությունները մինչև 22.05.2025թ. ժամը 24:00-ն ուղղելու անհրաժեշտության մասին:

Անհամապատասխանությունները օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ուղղվեցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

- մասնակցների կողմից բոլոր փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան: Գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված բոլոր հայտերը գնահատվեցին բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Մասնակիցների առաջարկած գները՝

ՀՀ դրամ

Սևան համայնքի Գագարին, Նորաշեն, Չկալովկա, Գեղամավան, Զովաբեր բնակավայրերի փողոցների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ				
Հ/Հ	Ապրանքի անվանումը	Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Տեխնո Շին» ՍՊԸ	140000	-	140000
2	«Նո Օնա»ՍՊԸ	98000	-	98000

թվաբանական սխալներ չկան

7. Գնային առաջարկների և ոչ գնային պայմանների գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել բավարար գնահատված մասնակիցներից ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Նո Օնա»ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ՝ արդյունքների ամփոփման, նիստը հրավիրել պայմանագիր կնքելու հաջորդ աշխատանքային օրը ժամը 11:00, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 164, 16 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Ա.Ղուկասյան

Անդամներ՝ _____ Մ. Մկրտչյան

_____ Հ. Ղուկասյան

_____ Մար. Մկրտչյան

_____ Մ. Ավետիսյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան